



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական
համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета
им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԿՆԵՐԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

13 (17)

ԵՐԵՎԱՆ 2024

ЕРЕВАН 2024

YEREVAN 2024

*Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի
անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից*

*Печатается по решению Ученого совета филиала Московского государственного
университета им. М.В. Ломоносова в г. Ереване*

*Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State Univer-
sity M.V. Lomonosov in Yerevan*

«ՈՒՌՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հան-
դեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի
մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրու-
թյուն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնա-
կանների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսա-
յականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորու-
թյան ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:


Назначение научно-методического журнала **«ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ
РУСИСТИКИ»** рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как
отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения
внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым
популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов,
грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.


ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №13
(17). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2024. – 314 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **ВАК РА***



 ORCID: 0000-0002-4377-1601

 ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

ПРЕПОДАВАНИЕ ЖАНРА ПЛАЧА В СТАРШЕЙ ШКОЛЕ

Кристине Геворговна Дадаян

*Учитель армянского языка и литературы,
ГНО Ширакская средняя школа,
с. Ширак, Ширакская обл., Республика Армения*

АННОТАЦИЯ

Фольклорной основой плача в армянской действительности была народная плачущая песня-поэма, которая была сочинена-исполнена на похоронах. Под плачем не надо понимать только осознание прошлых ошибок и сожаление, каждая работа оканчивается оптимистическими акцентами и выражает уникальный призыв жить, сражаться, бороться, созидать и очищаться. Армянские поэты раннехристианского периода ещё воздавали должное (Католикос Комитас, Давтак Кертог). Понятно, что новая идеология постепенно укоренилась в культуре. И когда поэты начали искать причину бедствий, вслед за Иеремией, они указали на людские грехи, связав надежды на спасение с милостью Божьей.

Ключевые слова: Плач, Священная книга, фольклорная основа, плачущая песня-поэма, история Армении, точка зрения, Иеремия, Мовсес Хоренаци, Григор Нарекаци, Католикос Комитас, Давтак Кертог, Нерсес Шнорали, средневековый плач, Псалтирь, метод, обучение.

Հարցի ուսումնասիրության համաձիռում կարևոր է նաև հայոց պատմությանը տիրապետելը. հայ գրականության մեջ գրեթե բոլոր ողբերը նվիրված են հայրենիքին ու նրա տխուր ճակատագրին, որոնք

հաճախ գրվել են իրադարձությունների անմիջական տպավորության ներքո: Նաև ժանրի մասին լավագույն պատկերացում կազմելու համար շատ կարևոր է Սուրբ գրքի ուսումնասիրությունը, քանի որ ողբի զարգացման վրա մեծ ազդեցություն ունի այն:

Մեր կարծիքով, այս թեման բավականին քիչ ուսումնասիրված թեմա է, և արժանի է մեծ ուշադրության, քանի որ այն կարծես հայ ժողովրդի արյան մեջ է: 10-րդ դասարանում այս թեման ուսումնասիրվում է 5-րդ դարի պատմական արձակի ուսումնասիրությանը զուգընթաց: Թեման գեղարվեստական մտածողությամբ դժվարընկալելի է, ինչը բարդացնում է ուսուցչի առջև դրված խնդիրը: Սակայն դասախոսության մեթոդով և այլ մեթոդների զուգակցմամբ թեման կապելով մերօրյա իրականության հետ՝ կարելի է աշակերտներին ծանոթացնել հայ գրականության գեղարվեստական այս երակի հետ էլ: Ողբ ասելով՝ չպետք է հասկանալ միայն անցյալի սխալների ըմբռնում ու զղջում. հայ գրականության մեջ յուրաքանչյուր ողբ ավարտվում է լավատեսական շեշտադրումներով և ապրելու, կովելու, պայքարելու, արարելու ու մաքրագործվելու յուրօրինակ կոչ է արտահայտում:

Առաջին հերթին, աշակերտներին պետք է ներկայացնել, որ համաշխարհային գրականության մեջ ողբի լավագույն նմուշ եղել և շարունակում է մնալ Նարեկացու մատյանը: Ապա պետք է աշակերտներին իրազեկել, որ ողբը պատմաքաղաքական իրավիճակի ծնունդ է՝ մշտական լարված իրավիճակ, պատերազմ, մահ, անմիաբանություն, արտագաղթ, պանդխտություն, սով, ավերվածություններ, թագավորության ու անկախության կորուստ: Պայետք է ներկայացնել, որ այս ամենը հարկադրում են յուրաքանչյուրին մի պահ կանգ առնել և հայացք նետել անցյալի երևելի օրերի վրա, նկատել ներկան, փորձել ելք գտնել ու առաջ շարժվել, իսկ բանաստեղծի նուրբ հոգին ու ճկուն գրի-

չը տխուր իրականությունը ներկայացրել է իր տեսանկյունից՝ դառնագին ողբալով հարազատ ժողովրդի ու երկրի համար:

Ուսուցիչը պետք է ներկայացնի, որ հայ իրականության մեջ ողբի ձևավորման բանահյուսական հիմքը եղել է ժողովրդական լայաց երգ-բանաստեղծությունը, որը հորինվել-կատարվել է հուղարկավորությունների ժամանակ: Ողբերգը, որը կազմել է նշանավոր անձանց թաղման ծեսի գլխավոր բաղադրիչը, կատարել են ողբասաց կամ ձայնարկու կանայք մեծ հանդիսավորությամբ, լալով, երգելով ու նվագելով, պարելով ու կաքավելով: Հանձին ողբասաց կանանց՝ ողբը ձեռք է բերել իր կոչված կատարողներին, որոնք թաղման ժամանակ լացուկոծի, հուզական խոսքի և տխուր մեղեդու համադրման արհեստն իրենց հմտությամբ ու կատարման վարպետությամբ վերածել են իսկական արվեստի: Միջառարկայական կապ ստեղծելով աշակերտներին պետք է հիշեցնել Արտաշես Բարեպաշտի հուղարկավորության ժամանակ լալկան կանանց ողբերը: Սգո երգերի կատարման վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են հայտնում մեր մատենագիրներն ու միջնադարյան բանաստեղծները: Հարկ է աշակերտներին ներկայացնել, որ ժամանակի ընթացքում ողբի թեմատիկ շրջանակը ընդլայնվել է, և դամբանական ողբի հիմքի վրա երևան են եկել պատմական, անձնական-քնարական, հիշատակարանային և այլ տեսակի ողբերը:

Զարգացման շատ երկար ու հետաքրքիր ուղի է անցել այս ժանրը, ըստ երևույթին հեթանոսական շրջանում բնորոշ է եղել հուսահատական եզրահանգմամբ: Մրա դեմ պայքարելուն մեծ նշանակություն էր տալիս քրիստոնեական գաղափարախոսությանը: Բայց քրիստոնեական եկեղեցին չէր կարող և չկարողացավ միանգամից լիովին հաղթահարել հուսահատական երանգները: Վաղ քրիստոնեական շրջանի հայ բանաստեղծները դեռևս տուրք էին տալիս դրան (Կոմի-

տաս Կաթողիկոս, Ղավթակ Քերթոդ): Հասկանալի է, որ նոր գաղափարախոսությունը աստիճանաբար արմատավորվեց մշակույթի մեջ: Եվ երբ բանաստեղծներն սկսեցին որոնել դժբախտությունների պատճառը՝ հետևելով Երեմիային, հանգեցին մարդկանց մեղքերը մատնանշելուն, փրկության հույսերը կապելով աստծու գթասրտության հետ: Երեմիայի ազդեցությունը հայ ողբասացների վրա ձևական, երևութական է, չնայած գրեթե բոլորն էլ հիշում են նրան իրենց ողբերում: Այս ժանրի առաջին արտահայտությունները տեսնում ենք Աստվածաշնչում, հիմնականում՝ Հին կտակարանում: Հետագայում Սուրբ գրքի թարգմանությունից հետո շատ հեղինակներ օգտվել են սուրբգրային ողբերից: Աստվածաշնչյան ողբերն այնքան կատարյալ են գրված, որ թարգմանությունից զատ մարդիկ փորձել են այն դարձնել արձակ: Այսպիսի կատարյալ ողբի արտահայտություններ գտնում ենք Մողմունի «Երգ երգոցում», Դավթի սաղմոսներում և վերջապես Երեմիայի ողբում: Հին կտակարանում մի գիրք ամբողջությամբ նվիրված է Երեմիա մարգարեի ողբին, որը բաղկացած է հինգ գլխից:

Ինչպես բոլոր մարգարեները, այնպես էլ Երեմիան շարունակ պատգամում էր. «Լսի՛ր Տիրոջ խոսքը, ո՛րջ Հրեաստան, դու, որ մտնում ես այս դռներով՝ երկրպագելու Տիրոջը» [1, Երեմիա 7: 16–20]: Ընդ որում, աստվածաշնչյան մեջբերումները հարկ է դասարանում կարդալ բնագրից:

Գրքում հեղինակն անդրադառնում է ոչ միայն ավեր երկրին, այլև ժողովրդի անբարո վարքագծին ու չվերադառնալու դեպքում կործանմանն ու երկնքի արքայությունից զրկվելուն և անկեղծ տառապում ու ողբում է իր հարազատ ժողովրդի համար: Նա քաղաքը համեմատում է իր հարազատ ժողովրդի համար: Նա քաղաքը համեմատում է որբ և այրի, անճար կնոջ հետ: Հետագայում այս համեմատական մեթոդը օգտագործել են շատ հեղինակներ, այդ թվում Շնորհալին իր հանրահայտ «Ողբ Եդեսիոյ»-ում: Այս ժանրի առաջին ար-

տահայտությունները տեսնում ենք Աստվածաշնչում, հիմնականում՝ Հին կտակարանում: Հետագայում Սուրբ գրքի թարգմանությունից հետո շատ հեղինակներ օգտվել են սուրբգրային ողբերից: Աստվածաշնչյան ողբերը այնքան կատարյալ են գրված, որ թարգմանությունից գատ, մարդիկ փորձել են այն դարձնել արձակ: Այսպիսով, բերելով ընդամենը մի քանի օրինակ՝ աշակերտները համոզվում են Աստվածաշնչում այս ժանրի կատարելության և հետագա ստեղծագործությունների վրա նրա ազդեցության մասին: Հայ հին և միջնադարյան գրականության մեջ ողբագրությունն սկզբից ևեթ չի ծագել իբրև անկախ տեսակ, այլ երևան է եկել պատմագրական կամ այլ կարգի ծավալուն երկերում՝ որպես նրանց բաղկացուցիչ մաս, որպես ողբական հատված, մտորում հայրենիքի, նրա ժողովրդի, կորսված պետականության և իր փայլից զրկված եկեղեցու մասին: Ուստի բնական է, որ ողբն այդքան հաճախական կիրառություն ունի միջնադարյան հայ գրականության, ի մասնավորի՝ հայ պատմագրության շրջանակում: Միջնադարյան ողբին նվիրված իր արժեքավոր մենագրության մեջ Պողոս Խաչատրյանը ժանրն ի սկզբանե դիտարկում է «իբրև հայ ժողովրդի կյանքի պատմական ու գեղարվեստական արտահայտություն» [Էջ, 3]:

Ողբերգությունը հայ գրականության մեջ հանդես է եկել պատմագրական աշխատություններում, որպես ողբական հատվածներ, որը մինչև 12-րդ դարը եղել է արձակ և որպես ինքնուրույն սեռ՝ գլխավորապես չափածո: Խորենացու ստեղծագործությունը իր ժամանակի բարձրակետն էր և ներկայումս էլ ողբի ժանրի լավագույն գործերից մեկը, սակայն որպես ինքնուրույն ժանր այն գործածվեց միայն միջնադարում:

Գրականության այս սեռը թեև իր մեջ ներառում է ժողովրդական ողբասացության որոշ տարրեր, բայց տարբերվում է նրանցից իր բնույթով և ընդգրկումով: Այն կարող է նվիրված լինել ազգային-եկեղեցական նշանավոր մի գործչի, կամ ժողովրդական կյանքում տեղի ունեցած եղերական մի իրադարձության, պատերազմների և զանազան աղետների, որոնց եղերերգումը դուրս է բերվում նեղ ընտանեկան կամ տեղական միջավայրից և դիտվում բազմակողմանի՝ որպես ազգային նշանակություն ունեցող ողբերգություն:

Անձնական-քնարական ողբերը կապվում են անհատական ապրումների, մարդու ճակատագրի կամ հոգեվիճակի հետ: Սրանք արտացոլվել են աղոթքներում և հատկապես «ապաշխարության» շարականներում: Անձնական ողբերի լավագույն օրինակը միջնադարյան հայ գրականության մեջ Գ. Նարեկացու «Մատյան ողբերգության»-ն է, ուր հեղինակը, որպես զղջացող անհատ, ներկայանում է ապաշխարողի խորունկ անկեղծությամբ և մարդկության վիճակի ողբերգականության գիտակցությամբ՝ աներևակայելի բարեպաշտությամբ կառչելով փրկության հույսին: Մատյանը չափածո ստեղծագործություն է: Նարեկացին այն համարել է «ողբերի երգ», թեև ձեռագիր օրինակները գրված են արձակ: 20-րդ դարում այն տողատել են, գրել բանաստեղծության ձևով և անվանել պոեմ: Երկում կան նաև արձակ հատվածներ, որոնք ունեն դավանաբանական կամ մեկնողական բովանդակություն: Պոեմը միջնադարյան հայ գրականության ամենաուշագրավ և արժեքավոր հեղինակությունն է, որն ամենատարածված բնագիրն է հանդիսացել Մաղմոսարանից ու Նոր Կտակարանից հետո: Այն համեմատվել է Սուրբ գրքի հետ և ծառայել ինչպես հոգևոր ներշնչման, այնպես էլ բանաստեղծական խոր ապրումների աղբյուր:

Պատմական ողբը հայ հին և միջնադարյան գրականության ինքնատիպ ժանրերից մեկն է, որի գոյությունը պայմանավորված է

մեր պատմության եղերական ընթացքով, Հայոց աշխարհին պատուհասած մեծագույն ողբերգություններով, օտար նվաճողների ասպատակություններով, դաժան հարստահարումներով ու գերեվարումներով, հուսահատության մատնված մարդկանց զանգվածային գաղթերով: Պատմաաղբերն ունեն ընդգծված ազգային հայրենասիրական բովանդակություն և քաղաքական նպատակաուղղվածություն: Հայ գրականության մեջ պատմաաղբի ժանրը արմատավորվել է Մ. Խորենացու «Ողբով», իսկ դրա ամենակատարյալ օրինակը մնում է Ն. Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» պոմը: Ողբեր են գրել Դավթակ Քերթոզը, Խաչատուր Կեչառեցին, Գրիգոր Տղան, Ստեփանոս Օրբելյանը, Առաքել Բաղիշեցին, Սիմեոն Ապարանցին, Հովհաննես Մակվեցին և ուրիշներ: Իրականության և երազանքի բախումից ծնված պատմաաղբերը հատկորոշվում են գաղափարական բովանդակության խորությամբ և լեզվաճական տարաբնույթ յուրահակություններով:

Պատմաքաղաքական ողբերը արտացոլել են ինչպես Հայաստանի, այնպես էլ գաղթաշխարհի հայության վիճակը (Լեհաստանի, Ղրիմի, և այլն): Ինչպես ամբողջ հայ մատենագրությունը, ողբը ևս սահմանափակված չի եղել միայն հայ ժողովրդին ու նրա հայրենիքին հասած աղետների լուսաբանությամբ: Ողբասացների համար հայրենասիրությունը նեղ ազգային պատյան չուներ և որոշ չափով կապված էր հավանաբար այն գիտակցության հետ, թե քրիստոնեական աշխարհի դժբախտություններից է, որ բաժին է ընկել հայ ժողովրդին, ուստի լավ օրերի ու ազատության երազանքը ևս կապվում էր հարևան ու հեռավոր հավատակիցների հետ: Նրանք սեփական ժողովրդի ապագայի հարցը կապում էին ընդհանուր քրիստոնեության ճակատագրին:

Ն. Շնորհալու «Ողբ Եղեսիոյ»-ն գրական այս տեսակի ամենակատարյալ օրինակն է: Պոեմը դառնում է ինչպես բանաստեղծ գործչի

քաղաքական նկրտումների, այնպես էլ նրա գեղագիտական նվաճումների բարձրագույն խտացումը: Ունենալով Խորենացու և Դավթակ Քերթողի «Ողբերի» նախօրինակը՝ Շնորհալին հիմք է դնում պատմաքաղաքական ողբին, ստեղծում իր դպրոցը, քանի որ հետագայում նրա նմանողությամբ ասպարեզ են գալիս այնպիսի ողբերգակներ, որպիսիք են Գրիգոր Տղան, Ստեփանոս Օրբելյանը, Գրիգոր Խլաթեցին, Առաքել Բաղիշեցին, Սիմեոն Ապարանցին, Հակոբ և Ստեփանոս Թոխաթցիները և ուրիշներ: «Ողբ Եղեսիոյ»-ն, ներառելով և՛ Խորենացու, և՛ Դավթակի, և՛ Նարեկացու, նաև աստվածաշնչյան ողբերի կառուցվածքային և լեզվամտածողական տարրերը, իր առանձնահատկությամբ ինքնուրույն երևույթ է, տեսակային սահմանազատված ամբողջությամբ հիմք է դնում հաջորդող նմանօրինակ բազմաթիվ ստեղծագործությունների: Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ»-ի ծնունդը իրական շարժառիթներ ունի, նրա հենքը ականատեսի պատմաձև է:

Նմանօրինակ ստեղծագործական հնարքներով է գրված 12-րդ դարի բանաստեղծ Գրիգոր Տղայի «Ողբ Երուսաղեմի» պոեմը՝ 1189 թ.: Պոեմը վերաբերում է 1187 թ. Երուսաղեմի գրավման դեպքերին Սալահադդինի կողմից, ինչպես նաև Կիլիկիայի հայերի քաջարի ինքնապաշտպանությանը՝ Սալահադդինի և թուրքերի դեմ: Հեղինակը մեղադրում է բոլոր քրիստոնյա երկրներին, որոնք միացյալ ճակատ չկազմեցին մահմեդական նվաճողների դեմ և օգնության չհասան ու չփրկեցին Երուսաղեմը, իսկ պատկերման ձևը հիշեցնում է Շնորհալու պոեմը:

Երկն արժեքավոր է իր պատմական շաղախով, որը պատկերացում է տալիս 12-րդ դարի Մերձավոր Արևելքի՝ Կիլիկյան Հայաստանի քաղաքական վիճակի ու Պաղեստինի բարքերի մասին: Այն գրված է միավանկ հանգերով՝ կրկնելով «Երուսաղեմ» բառը: Բանաստեղծը օգտագործել է ժողովրդական երգերի ոճը, բառաձևերը: Ասպարեզ գա-

լով Շնորհալուց հետո, Գրիգոր Տղան զարգացնում է հանգավորման արվեստը՝ կիրառելով զանազան հանգեր:

13-րդ դարի պատմական ողբի լավագույն օրինակներից է **Ստեփան Օրբելյանի** «Ողբ ի դիմաց Կաթողիկէին» երկը, որը նա գրել է 1300 թ., Խ. Կեչառացու խնդրանքով: Նրա ողբի պատմական հիմքը այն դժբախտ իրադարձություններն էին, որոնք տեղի էին ունենում Հայաստանում ու Կիլիկայում:

Պատմական նույն ժամանակաշրջանին է վերաբերում նաև **Խաչատուր Կեչառացու** գործունեությունը: Հայրենասիրական խոր զգացումներով է գրված նրա «Ողբ վասն աւերման տանս արեւելեան» բանաստեղծությունը, որն արձագանքում է 1290-ական թվականներին Հայաստանում տեղի ունեցած ծանր դեպքերին, երբ մոնղոլական լուծը անտանելի է դառնում Ղազան խանի օրոք, երբ գերեվարվում ու կողոպտվում է ամբողջ երկիրը: Կեչառացին ողբում է «տանս արեւելեան», այսինքն Հայաստանի անօգնական ու ավերված վիճակը, հայոց եկեղեցու պառակտումը և նշանավոր հայ իշխանների կորուստը, որոնք ուժ ու կարողություն ունեին հաշվի նստելու մոնղոլների հետ:

Քնարական զեղումով ու այրունտոտ հոգով գրված այս ողբում հեղինակը հայրենասիրական հույզեր է ներշնչում անցած հերոսների վերհիշումով ու ազգային մղումներ տալիս իր ժամանակի մեծերին ու մարդկանց:

Արժեքավոր գրական վաստակ է ունեցել նաև բարձրաստիճան եկեղեցական, բանաստեղծ, փիլիսոփա, քերական ու մանկավարժ **Առաքել Սյունեցին**:

Հարուստ և արժեքավոր ճառանգություն է թողել նաև **Առաքել Բաղիշեցին**: Նրա «Ողբ մայրաքաղաքին Ստրմալօլու» գործը գրված է 1453 թվականին, Կոստանդնուպոլսի անկման թարմ տպավորությունների տակ և մարդկության անունից բանաստեղծը ողբում է Բյուզան-

դիպալի մայրաքաղաքի կործանումը, քաղաք, որը հինավուրց քաղաքակրթության օրրան էր եղել դարեր ի վեր: Նա հիշում է քաղաքի մեծության ու համբավին մասնակցած թագավորների անունները, խոսուն ու գրավիչ համեմատական պատկերներով:

Կ. Պոլսի ազատագրումը, ըստ Բաղիշեցու, փրկելու էր ողջ քրիստոնյա աշխարհը, այդ թվում նաև քրիստոնյա Արևելքն ու Հայաստանը: Հեղինակի ողբը թեպետև տխուր բովանդակություն ունի, այսուհանդերձ լավատեսական է ապագայի հանդեպ:

Պատմական նույն իրադարձությանն է նվիրված նաև **Աբրահամ Անկյուրացու** «Ողբ ի վերայ առման Կոստանդնուպոլսոյ» պոեմը:

Այսպիսով Բաղիշեցու և Անկյուրացու ողբերը, որոնք երկուսն էլ գրվել են Կ. Պոլսի անկման անմիջական տրամադրության տակ արտահայտում են քրիստոնյայի ցավոտ հույզերը բյուզանդական կայսրության փառավոր մայրաքաղաքի անկման մասին, որն իբրև կրոնական և քաղաքական պատվար էր դիտվում մահմեդական երկրներով շրջապատված հայերի համար:

Իհարկե, միջնադարում շատերն անդրադարձան այս ժանրին, սակայն լավագույն նմուշները թերևս սրանք էին, որոնք ժանրը հասցրին իր բարձրակետին: Ուսուցիչը թեման ներկայացնելիս ուշադրություն է դարձնում ողբերի հեղինակների՝ մանրուքի միջոցով ընդհանրացում կատարելու, հայկական կենցաղի համար բնորոշն ու տպավորիչն առանձնացնելու դրվագների վրա:

Թեման աշակերտներին թեև նպատակահարմար է մատուցել դասախոսության մեթոդով, սակայն կարելի է օգտվել նաև վեճի դիագրամից՝ բացահայտելով ժանրային տարբեր դրսևորումների նմանություններն ու տարբերությունները: Թեման մատուցելուց հետո գրատախտակին մտքերի տարափի մեթոդով կարելի է ամրակայել այն՝ բնութագրական հատկանիշները ընդգծելով:

Այսպիսով, թեմայի ուսումնասիրության շրջանակներում զուգահեռեղծով ուսուցման մեթոդներն ու առարկայական գիտելիքները, օգտագործելով միջառարկայական կապերը հայոց պատմության հետ, ուսուցիչը ներկայացնում է հայ մարդու ողբերգությունը գրականության մեջ՝ յուրաքանչյուր աշակերտի հնարավորությունն ընձեռելով կատարելու ինքնատիպ եզրահանգումներ:

ЛИТЕРАТУРА

1. Աստվածաշունչ (Էջմիածին թարգմանություն), 2015:
2. *Գասպարյան Դ.* Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն: – Երևան, 2009:
3. *Խաչատրյան Պ.* Հայ միջնադարյան պատմական ողբեր: – Երևան, 1969: –344 էջ:
4. *Հայրապետյան Ս.* Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն: – Լոս-Անջելես, 1986: – 723 էջ:
5. *Մկրյան Ս.* Գրիգոր Նարեկացի: – Երևան, 1955: – 304 էջ:
6. *Նարեկացի Գր.* Մատյան ողբերգության: – Էջմիածին, 2012: – 869 էջ:
7. *Շնորհալի Ն.* Ողբ Եղեսիոյ: Երևան, 1968:
8. *Ջրբաշյան Է.* Գրականագիտության ներածություն, բանարվեստի հիմունքներ: – Երևան ԵՊՀ հրատարակչություն, 2011: – 415 էջ:

ՈՂԲԻ ԺԱՆՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Բ.Գ. Դադայան

*Հայոց լեզվի և գրականության ուսուցիչ,
Շիրակի միջնակարգ դպրոց ՊՈՍԿ,
գ. Շիրակ, Շիրակի մարզ, Հայաստանի Հանրապետություն*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ իրականության մեջ ողբի ձևավորման բանահյուսական հիմքը եղել է ժողովրդական լայաց երգ-բանաստեղծությունը, որը հորինվել-կատարվել է հուղարկավորությունների ժամանակ: Ողբ ասելով՝ չպետք է հասկանալ միայն անցյալի սխալների ըմբռնում ու գղջում: Յուրաքանչյուր գործ ավարտվում է լավատեսական շեշտադրումներով և ապրելու, կովելու, պայքարելու, արարելու ու մաքրագործվելու յուրօրինակ կոչ է արտահայտում: Վաղ քրիստոնեական շրջանի հայ բանաստեղծները դեռևս տուրք էին տալիս դրան (Կոմիտաս Կաթողիկոս, Ղավթակ Քերթող): Հասկանալի է, որ նոր գաղափարախոսությունը աստիճանաբար արմատավորվեց մշակույթի մեջ: Եվ երբ բանաստեղծներն սկսեցին որոնել դժբախտությունների պատճառը՝ հետևելով Երեմիային, հանգեցին մարդկանց մեղքերը մատնանշելուն, փրկության հույսերը կապելով աստծու գթասրտության հետ:

Բանալի բառեր՝ Ողբ, Սուրբ գիրք, բանահյուսական հիմքը, լայաց երգ-բանաստեղծություն, հայոց պատմություն, տեսանկյուն, Երեմիա, Մովսես Խորենացի, Գրիգոր Նարեկացի, Կոմիտաս Կաթողիկոս, Ղավթակ Քերթող, Ներսես Շնորհալի, միջնադարյան ողբ, Սաղմոսարան, Նոր Կտակարան, մեթոդ, ուսուցում:

TEACHING THE CRYING GENRE IN HIGH SCHOOL

Q. Dadayan

*Teacher of the Armenian language and literature,
SNPO Shirak Secondary School,
Shirak village, Shirak region, Republic of Armenia*

ABSTRACT

In Armenian reality, the folklore foundation for the formation of grief was a folk painful poem, which was invented and implemented during the funeral: Saying sorrow, one should not under-

stand only the understanding of the mistakes of the past and regret. Each work ends with optimistic accents and expresses a kind of call to live, fight, fight, create and purify: Armenian poets of the early Christian period still paid tribute to this (Catholicos Komitas, Davtak Kertogh): It is clear that the new ideology gradually took root in the culture. And when the poets began to look for the cause of misfortunes, following Jeremiah, they came to point out the sins of people, linking hopes for salvation with the mercy of God.

Keywords: sorrow, holy book, folklore foundation, song and poem of pain, history of Armenia, point of view, Yeremiah, Movses Khorenatsi, Grigor Narekatsi, Catholicos Komitas, Davtyak Kertogh, Nerses Shnorali, medieval sorrow, Sagmosaran, New Testament, method, teaching.

Информация о статье:

статья поступила в редакцию 12 февраля 2024 г.,

подписана к печати в номер 13 (17) / 2024 – 20.06.2024 г.